Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերմազգածական համայնքներ
ոչ առևտրային իրավատերություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) License.

Դու կարող ես.

տարածել և տարածել նյութը ցանկացած միջոցով կամ կրիչով
մեջբերել կամ մշակումներ անել նյութը ստեղծելու համար հիմք

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

«ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ-ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ» № 1

ՆԱՅԻՐԻ ԶԱՐՅԱՆ

ՀԻՆ ԱՂՋԻԿ

ՆԿԱՐՆԵՐԸ ՑԵՎ ՇԵՊԻԿԸ

Նկարիչ՝ Մ. ԱՐՈՒՏՅՈՒՆԵԱՆ

Հրատարակություն
Հ. Կ. (բ.) Կ. Կ. Կ. բան.-գեղջ. բաժնի

ԵԵՐԵՎԱՆ 1926 թ.

Ա 245

Պոեմը

Կարգալուց առաջ

Կարդա՛

ՌԻԿՇԻՆ—Չինաստանում այն բանվորներն են կոչվում, վորը ծիու տեղ կառք և քաշում։

ԿՈՒԼԻՑ—Չինական ստիորական բանվոր։

Գրառեպ. № 753 (բ), Տիրաժ 3000, Պատվեր № 3856

Հայպետպոլիգրաֆի 2-րդ տպարան, Յերևան

ՉԻՆ ԱՂՋԻԿ

I.

Չին-Մաչինը չեմ տեսել յես,
Չին-Մաչինը շատ ե հեռու.
հեքյաթում միայն լսել եմ
կարդացել եմ հետո թերթերում։

Ասում են՝ Չին-Մաչինում
չքավոր կուլիներ կան շատ,
թե՝ այնտեղ հաց չի լինում
բրինձ են ուտում խաշած։

Հացի տեղ բրինձ են ուտում
ու շինում ամաններ չինի.
շինում ուղարկում են դուրս—
Յեվրոպա—Չին-Մաչինից։

Իսկ այնտեղ՝ սպիտակ ու հարուստ՝
մինչեվ լույս սեղան նստած՝
այդ չինի չքնաղ թասերում
ուտում են ու խմում շամպայն։

Ասում են Չին-Մաչինում
չքավոր ռիկշիներ կան շատ։
Չին ռիկշուն քշում են դամշիով,
ձիու տեղ կառքին լծած։

Լծում են ձիյու պես կառքին,
քշում են փողոցից-փողոց.
իսկ իրենք կառքի մեջ հանգիստ
նստում են խոսում, ծիծաղում։

Եղպես եր Չին-Մաչինը,—գաղութ,
բանում եր գիշեր ու ցերեկ։
Իր բրինձն ուտում եր կավում,
իսկ ՅԻՆԻՆ տալիս տերերին.

II.

ԱՂՋԻԿԸ

Ապրում եր քաղաքում Շանհայ
տասերկու տարեկան մի աղջիկ.
Նա ուներ ծեր կուլի մի հայր՝
ու յեղբայր մի ջահել ռիկշի։

Գաշում եր Ռիկշին ժամերով
իր տայլը փողոցից-փողոց.
ու մի բուռ բրինձ եր բերում
կերակրում հորն ու քրոջ։

Որերով քաշում եր Ռիկշին
ու միտք եր անում խեղճ—կրակ.
—«Կյանքն ես ե,—քաշիր ու քաշիք
փողոցում սրան, նրան»

Բայց յեկան ծախորդ սեվ որեր,
Ռիկշիները շատ շատացան։
վաստակը իջնում եր որ-որին,
վազում եր թեկուզ անդադար։

Եվ այնքան ըրինծ չեր բերում.
վոր թե հայրը, թե քույրն ուտելին.
տեսնում եր սովի ճանկերում
կը մեռնեն թե նրանք, թե ինք։

Դժվար եր։ Ու փոքրիկ քրոջը
վերցրեց տարավ գործարան
Մի «ազնիվ» **ապիտակ** պարոն
ժպտալով ընդունեց նրանց։

Աղջիկը մտավ գործարան.—
դեղնամաշկ անթիվ կուլիներ,
մանուկներ մաշված իր նման,
վոնց չ'որ ծանր յերազ լիներ...

Գալիս եր ծծկեր յերեխան
պինդ կապած մոր շալակից.
իսկ մայրը գլուխը կոխած
գնում եր մատաղ «նորեկին»։

Նստացրին մաշինի դիմաց.
ասացին «ուշադի՛ր բանի»։
Ու անցան ժամեր անհամար,
որ, շաբաթ, ամիս մի բանի...

Որերը շա՜տ են յերկարում,
որերը թվում են տարի։
Աղջիկն եչ դիմանալ չի կարող,
կախվում է քունը աչքերից։

Բայց կանգնած հակիչը գլխին,
սեվադեմ դաժան մի խաչիշիկ.
պտտվող մաշինից ել խիստ
շարժում եր անողոք դամշին։

III.

ԱՂԵՏ

Առավոտ։
Աղջիկը քնահար է։
Չի կարող էլ գործի գնա։
Համոզում են հայրն ու յեղբայրը,
անբրինձ, սոված կը մնանք։

Վազում են այտերով պղտոր
արցունքի յերկու դառն առու,—
թվում եր, թվում եր այդ որ,—
զավոդից էլ չեր դառնալու։

Արեվը, հրշեկ մի ռիկշի,
իր կառքը նոր եր դուրս քաշում,
հագնում եր Շանհայը շեկ
այդորվա շորերն աբրշում։

Զարմոդում։
Մաշինը կրկին։
Վոնց վոր սեվ վիշապ—թշնամի,
փչում եր մաշինի գրկից
մահագույժ ցուրտ մի քամի։

Բայց լսիր,—
շուրջը սուս,
շրշուկ։
Փախսում են զգույշ կուլիները։

Լսում է.
—«Լենին»...
—«Սուն-Յաթ-Սեն»...

Պիտի գան,
Պիտի գան,— ասում են,—
Պիտի գան՝ կուլուն ու ռիկշուն
սպիտակ տերերից ազատեն.

Թունդ յելավ սիրտը աղջկա,
ականջը սրեց, վոր լսի.
—«Շուտ կգա՞ն»...
—Կգան, կգան...—
Իլիկներն ան խոսում միասին։

Այդ քաղցր անուշ շշուկով
աղջիկը հոգնած մրափեց։
Ջնգում են գանգում կիսաքուն
ցնծության գոնգեր ու դափեր։

Ջնգում են...—
Բայց հանկարծ
—Ե՛յյ...—
Մաշինը, վոնց վոր թշնամի,
յերկաթե ձեռքերով բռնեց
աղջկա միահյուս ծամից։

Ճիչ։ Աղմուկ։ Ոգնության կանչ։
Ու սարսափ, բողոք դառնագին։
Ով կարա փրկել աղջկան
Իլիկների խենթ ժանիքից։

Կուլիները
ծանր
ու տրտում
նայում են իրար յերեսի։
Մաշինը դուրս և շպրտում
մաս առ մաս
միս,
արյուն,
մազեր։

IV.

ՌԻԿՇԻՆ

Իսկ Ռիկշին քաշում եր այդ որ
իր բեռը—մի պարոն գեր.
վազում եր փոշոտ ճակատով
քրտինքի մի Դեղին Գետ։

Վազում եր հոգնած անլեզու,
աչքերը լցված մշուշով.
իսկ «բեռը» վռազում եր, ասում.
—«Շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ»։

Անցնում են։
Շենքեր։
Կոնսուլատ։
Հասել են ապիտակ թաղին։
Ժպտում է Դրոշն ալվլան
ՍԽՀՍ
շենքի կատարից։

Ա 7145

Խոսում է դրոշը Ռիկշուն
ու հասկանում է նա դրոշին.
—«Մեր յերկրում սավետ է իշխում,
Սովետում՝
կուլին
Ու Ռիկշին։

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

Նայում է Ռիկշին.—
Բարձր—
Բալ՝գոնում
բյուստն է Լենինի։

Ժպտում—
խոստանում է կարծես.
—«Այստեղ էլ սավետ կը լինի»։

Բայց բեռը բռդեց.
—«Ծո՛ւտ վազիր»։
ռիկշին, խեղճ, առաջ անցավ.
ու վոնց վոր ծաղ հովազի
մռլտաց սրտի՝ մեջ մի ցավ...

V.

ՓՈՂՈՑՈՒՄ

Յերեկոյան հոգնած հետ եր գալիս Ռիկշին,
վոր հոր ու քրոջ հետ խաշած բրինձ ուտեր,
ու պատմեր Լենինի, Սուն-Յաթ-Սենի
մասին,
յեվ ուրիշ նոր բաներ, ինչ վոր այդոր գիտեր։

Տեսավ փողոցներով հոս զված գալիս են տուն
կուլիները տկլոր, տղամարդ ու կին,
բայց ինչո՞ւ յեն վիճում...
Կանայք հեծկլտում ..
Ու մոտեցավ Ռիկշին՝
հարցրեց մեկից։

—Քո՛ւյրս...—
ու բոլորը վարանել են լուռ։
Ինչ խոսքերով թշվառ Ռիկշուն մխիթարեն։

—Եյ, լսեք,
մաշինը մեզ ել և կուլ տալու,
Դեղին Գետն և յեկել կուլիներին տարել։

—Չինացիներ, հերի՛ք,
հերի՛ք է մեզ տանջեն
—Մահ սպիտակներին!
—Չինաստանից դուրս!
—Գնա՛նք անգլիական կոնսուլատի առջև..
ու վորոտում են թունդ,
—Բանթող!
—Գործադուլ!

* * *

Ցեկան, ելի յեկան մինչ անագան գիշեր,
ու փողոցը դարձավ բերներերան միտինգ,
դեղնափրփուր մի գետ, վոր կարող եր քշել
ու կռվի դաշտ հանել չին, ռիֆ, ֆարա ու
հնդիկ։

VI.

ՅՈՒՅՑ

Առավոտյան, յերբ վոր արեվի շեկ ուիկշին
վոսկի սելն եր քաշում կապույտ դարբասներից,
արեվի հետ յելած նրանք հավաքվեցին
ու փողոցներն անվերջ վողողեցին նորից։

Կուլիներ են ըմբոստ ու ուիկշիներ անգործ,
ուսանողներ որվա բուռ բրնձին կարոտ.

Ռիկշին, Ռիկշին յեկավ սայլը թոդած պանդոկ,
յետեվից հայրը ծեր դողդոջ վոտքերով։



Դրոշներ են բերում հրդեհի պես վարար,
դրոշների վրա Լենին ու Սուն-Յաթ-Սեն,
դրոշները գալիս, խառնվում են իրար.
—«Ստուկ ժողովուրդներ բոլոր, միացե՛ք»

Վոնց վոր դեղին գետը իր ափերից յելած,
կարմրափրփուր, նրանք շարժվեցին առաջ,
ու բողոքներ հղի... յեվ հայհոյանք, յեվ լաց,
շպրտելով **ոտար քաղաքի** վրա։

—Մահ **ապիտակներին**!
—Չինաստանից հեռու!
—Մահ բոլոր տերերին, **ապիտակ, դեղին,**
վոխր ռումբերի պես բռնած բռունցքներում
ցույցը հուզված հասավ **Եվրոպական քաղին.**

Բայց հակում են նրանք շների պես արթուն.
յեվ ապիտակ ոպան վորոտաց.
—«Կրակ!»։
ու բյուրավոր փողեր մի ակնթարթում
կրակեցին անզեն կուլիների վրա։

Հանկարծակի ճայթած այդ կրակ-կարկտից
ցույցը մոնչալով կիավեց յերկուսի.

ու դիակներ ընկան արնաշաղախ գետին,
Ռիկշին, Ռիկշին ընկավ գլուխը թեք ուսին։

Հայրը տեսավ նրան...
ու խենթ, խելագարված,
պատառելով հագի ցնցոտիները հին,
ինքնիրեն Գետը նետեց
ու դառնածայն,
վառված՝
—«Զինացինե՛ր,—գոռաց,—
կյանքը դա՛ռն ե մահից»։

Ջղագալար դեմքեր...
Բայց ահա նա,
—Սարսափ—
գլուխը դուրս հանեց վարար ալիքներից
ու բառաչեց մատը Ոտար թաղին պարզած
—Մահ—
ապիտակ գեղին բոլոր տերերին!

Ասաց ու բյուրավոր բռունցքներից թռած
բողոքի պես կրկին սուզվեց ջրի տակ.
ձեռքը ձիգ դուրս թողած ալիքների վրա,
տատանվում եր վորպես կռվի ահեղ խթան:

—«Մահ սպանիչներին!»
ու ձեռքն ել կորավ:
կուլիները անեղ «մնաս բարեվ» ասին.
բայց բոլոր սրտերի ալիքների վրա
Ցա իր մատը պարզեց **Ոտար բաղամասին:**

Ա 1/7145

VII.

Չին աղջիկ, չեմ տեսել վոչ հորդ,
վոչ յեղբորդ, յերկիրդ հեռու,
ձեր մասին տենդով ահավոր
կարդացել եմ միայն թերթերում,

Բայց թողած աչքերիս առջև
ջրանցքի յերկիրն իմ կապույտ,
Չին աղջիկ, յերգում եմ քեզ
ու հորդ մասը մահաբույր։

Մենք ունենք կոմյերիտբանակ,
պիոներական վաշտեր վարդավառ,
թերթերդ փեթռեց մեքենան,
տասերկու տարեկան վարդ։

Չին աղջիկ, չեմ տեսել վոչ քեզ,
յեվ վոչ ել յերկիրդ հեռու.
բայց ճիշդ անոգ, աղեկեզ
զգում եմ սուր իմ թոքերում։

Ծանոթ ե յեվ դեմքդ գունատ,
յեվ քունդ կախված աչքերիցդ
յեվ այդ ժանտ, անսիրտ մեքենան,
յեվ ստրուկ վիճակը յերկրիդ։

Ու վոչ թե միայն մի աղջիկ,
այլ այսոր մի սեվ մեքենա
բռնել ե մի մեծ Չինմաչին,
ծամում ե համառ, անխնա։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0043638

204.
Ա Ի/ 70145

Ու վոչ թե միայն մի Ռիկշի,
այլ այսոր—Շանհայից Միլան—
միլիոններ ցերեկ ու գիշեր
քանդում են այդ հին մեքենան։

1925 թ.—Ցերեվան

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԵՐԵՎԱՆ